# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<13>> հունիսի 2013 թ. N 37

*ք. Արմավիր*

### *ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի $77^2$-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի N190-Ա հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքներում վարչական հսկողություն իրականացնելու 2012 թվականի աշխատանքային ծրագիրը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ, Ոսկեհատ, Այգեշատ(Արմ.) և Նոր Կեսարիա գյուղական համայնքներում վարչական հսկողություն իրականացնելու նպատակով.

***կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝***

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Վ. Մկրտչյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 20 աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ. Կարապետյանին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

*ՄԱՐԶՊԵՏ՝* *Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի*
*2013 թվականի հունիսի 23-ի*
*N37 կարգադրության*

## *ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ*

*Հանձնաժողովի նախագահ՝*

| | |
|---|---|
| Վ. Մկրտչյան | -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ. |

*Անդամներ՝*

| | |
|---|---|
| Գ. Հովհաննիսյան | -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ. |
| Լ. Հարությունյան | -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբական բաժնի գլխավոր մասնագետ. |
| Ս. Սարգսյան | -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ: |

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**